

ԳՐԱԽԱՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԵՐԼԻՈԳՐԱՖԻԱ

Վարազ Առաքելյան

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԻ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԵՐԿԻ ՄԱՍԻՆ*

Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակությամբ լույս է տեսել Ա. Ա. Աբրահամյանի «Հայերենի դերբայները և նրանց ձևարանական նշանակությունը» մենագրական աշխատությունը, որը հեղինակի թեկնածուական դիսերտացիան է: Գիրքը նվիրված է հայերենի դերբայների բազմակողմանի քննությանը. զորում առաջադրված հարցերը ստացել են իրենց խոր գիտական վերլուծությունը և սպառիչ պատասխանները:

Աշխատությունը բաղկացած է չորս մասից՝ «Ընդհանուր մաս», «Հայերենի դերբայները», «Հայերենի դերբայների ձևարանական նշանակությունը», ապա «Ամփոփումներ և Ցանկեր»:

Ընդհանուր մասը, որ վերնագրված է «Դերբայի ըմբռնումը հայ բերականության պատմության մեջ» և «Դերբայը որպես բայական հասկացողություն», ներկայացնում է հարցի պատմությունը և դերբայ հասկացողության բերականական հիմունքների ու դրանց սխալ մեկնությունների քննությունը: Հեղինակը արժեքավորել է մինչև այժմ եղած բոլոր ընդունելի դիտողությունները այդ հարցի վերաբերյալ՝ սկսած Դիոնիսիոս Քրակիացուց, վերջացրած պրոֆ. Ա. Ղաբրիյանի բերականությամբ: Ավելի քան երկու տասնյակ տպագիր և մի շարք ձեռագիր բերականություններ են թարգմանված են մանրամասն ուսումնասիրության, որտեղ բացահայտվել են դերբայի ըմբռնման ամենաբնորոշ տարբերությունները, զանազան կարծիքներն ու տեսակետները, ապա վերջիններիս տեսական հիմունքներն ու ելակետները: Հեղինակը սույն նկարագրող չէ. նա վիճում է, թափանցում հարցի էության մեջ, վեր է հանում ամենաանկատելի նրբությունները և տալիս դերբայի գիտական սահմանումը:

Երկրորդ մասը, որ շուրջ 211 էջ է, աշխատության կարևորագույն մասն է. այստեղ հեղինակը նկարագրում է հայերենի բոլոր դերբայները, ըստ որում ոչ միայն գրական լեզվի տարբեր շրջանների, այլև բոլոր բարբառների դերբայները: Նա ուսումնասիրել է նաև դերբայների ծագման հետ կապված շատ հարցեր, տվել է ձևերի ստուգաբանությունների պատմությունը և իր կողմից առաջարկել է վիճելի մեկնությունների նկատմամբ նոր բացատրություններ: Այստեղ պարզ երևում է հեղինակի հմտությունը գիտական գրականության և աղբյուրների օգտագործման մեջ: Նա ծանոթ է հայագիտական գրականության բոլոր մանրույթներին և մանրակրկիտությամբ դրանցից բաղել է իր նյութին վերաբերող ճիշտ ու գրականը և քննադատորեն մերժել սխալներն ու անճշտությունները, լրացրել թերիները և այլն:

Հեղինակը նյութին նայելով պատմական տեսանկյունից, երևույթները վերլուծում է իրենց զարգացման մեջ, աստիճանական փոխանցումներով, ըստ որում չի բավարարվում ձևերի էվոլյուցիայի պրոբլեմներով, այլ միաժամանակ քննում է դրանց կրած իմաստային փոփոխությունները, բերականական և բառական արժեքներն, արդի հայերենում, բարբառներում, գրաբարում դրանց գործածության շափը, մասնավոր դեպքերը, արդյունավետության աստիճանը, հեռանկարները և այլն: Այստեղ էլ հեղինակը ցուցաբերում է մեր մատենագրության ու նոր գրականության խոր հմտություն, իր առաջ քաշած հարցերն ու երևույթները վերլուծում է, քննում ու ճշտում՝ յուրաքանչյուրի համար բերելով տասնյակ թարմ օրինակներ տարբեր աղբյուրներից, տարբեր բնույթի, որոնք նպաստում են լեզվական իրողությունների բազմակողմանի բացահայտմանը և հավաստի են դադարում հեղինակի առաջադրած գրույթները:

Այս պատճառով էլ նրա հետազոտությունը դառնում է ամբողջական, բովանդակալից, ու տվյալ հարցի վերաբերյալ սպառիչ:

Գիտական ճշտությամբ քննված են հայերենի ինը դերբայները, նրանց կրած պատմական

* Ա. Արամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևարանական նշանակությունը, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակություն, 1953, 441 էջ:

փոփոխությունները՝ հայոց լեզվի տարրեր է տապանեցրում, բարբառներում և նույնիսկ այս կամ այն խոսվածքում:

Երկրորդ մասում հեղինակը ճշտում է յուրաքանչյուր դերբայի սահմանումը, բացահայտում է դրանց ձևախմբատարանական հանգամանքները՝ շմոռանալով դերբայի հետ կապված ոչ մի «մանրուք»:

Երրորդ մասը նվիրված է դերբայների ձևաբանական նշանակության բնութայնը. հեղինակը մանրամասն շարադրել է դերբայների միջոցով բաղադրյալ ժամանակների կազմելու ողջ պրոցեսը: Նա շի սահմանափակվում ժամանակների կազմության ամբողջ սիստեմի լոկ նկարագրությամբ, որտեղ առավել անհրաժեշտ կդառնային ամբողջական աղյուսակների շարաններ: Այդ աղյուսակները իսկապես հարկավոր են և կան նյութի ամբողջականությունը չխախտելու և հայերենի խոնարհման սիստեմը պատկերացնել տալու համար: Բայց դրանց հետ հեղինակը թափանցում է լեզվապատմական, լեզվամտածողական բարդ երևույթների բացահայտման, հայերենի բայերի, ժամանակների կազմության ամենանրբին պրոբլեմների բնութայն մեջ և հասնում է որոշակի արդյունքի:

Չորրորդ մասը, մոտ 40 էջ, նվիրված է ուսուցիչներին, համառոտագրությունների բացատրությանը, օգտագործված գրականության ցանկին:

Ո՞րն է այստեղ այն նորը, որ դոցենտ Ա. Արրահամյանի աշխատությունը դարձնում է գիտական ու այժմեական: Ամենից առաջ բերականական առանձին խնդիրների նվիրված մենագրական աշխատությունները մեղանում շատ սակավ են. մենք ունենք բազմաթիվ բերականություններ, բայց բերականությունները, որքան էլ գիտական ու կատարյալ լինեն, ի վիճակի չեն սպառելու լեզվական որևէ կոնկրետ հարց ըստ նրա ծավալի և գիտական խոր ու մանրամասն մըշակման: Մեր ազգային լեզվի բարդ պրոբլեմները սպասում են առանձին հարցերի նվիրված մենագրական աշխատությունների: Գրախոսվող գիրքը սպասում է բայի յուրահատուկ արտահայտությունը հանդիսացող դերբայի վերաբերյալ ամբողջ նյութը:

Դոց. Արրահամյանը դերբայները շի վիդյուցի սոսկ որպես բայի մի ձևական արտահայտություն և ուսումնասիրել նրա պատմական էվոլյուցիան, դրան զուգահեռ նա ուսումնասիրել է հայերենի խոնարհման սիստեմը, որ գերազանցապես անալիտիկ է (մանավանդ արդի հայերենի և բարբառների), այսինքն՝ ամբողջովին խաբսիվում է դերբայի վրա և բացառիկ է դարձնում նրա ձևաբանական նշանակությունը:

Ուրեմն կողմնակի կերպով հեղինակը մեր բայի դերբայների հետ կապված խոնարհման սիստեմը ի մի է հավաքել և հսկայական նյութ է կուտակել այդ ուղղությամբ՝ ապագա գիտական և պատմական բերականության համար:

Այստեղ բացահայտվել են հայոց լեզվի դերբայների գոյացման, ձևավորման ողջ պրոցեսը, դրանց ստուգաբանական, իմաստաբանական, բառական և բերականական արժեքները: Վերջնականապես ճշտվել են դերբայի ըմբռնումը և հայոց լեզվի առանձին դերբայների սահմանումը: Մի շարք դերբայական ձևերի համար հիմք է ընդունվել անորոշ դերբայը: Ապացուցվել է, որ ում դերբայական մասնիկը ոչ թե դրվել է բայահիմքի վրա, այլ ուղղակի անորոշ դերբայի վրա: Հեղինակն այդ հաստատել է ոչ միայն տալ, գալ, լալ անորոշների բարբառային կազմության (տալում, լալում, դալում) օրինակներով, այլև բերել է ամբողջ մի բարբառ՝ Հավարիկի բարբառը, որն անկատար դերբայի ում մասնիկը բացառապես անորոշ դերբայի վրա է դնում: Այդ կապը հաստատելու համար հեղինակը շի բավարարվում սոսկ օրինակներով, նա դիմում է լեզվաբանական մի շարք միջոցների օգնության: Ամենից առաջ ում մասնիկով անկատար դերբայ ունեն այն բոլոր բարբառները, որոնք կազմում են այդ նույն մասնիկով ներգոյական հոլով: Սրանից բացի հեղինակը բնում է անկատար դերբայի ում և ներգոյականի ում մաքնիկի հնչյունական փոփոխությունները և ցույց է տալիս, որ այդ փոփոխություններն այս կամ այն բարբառում ընթանում են միևնույն ուղղությամբ և այլն:

Պրոֆ. էդ. Աղայանն իր «Բնություն Սեղրու բարբառի» ուսումնասիրության մեջ բովանդակում է, խոսելով ձևերը անվանում է մակրայական դերբայ: Ա. Արրահամյանը ուսուցիչների անկատար դերբայի дефиницию ֆրանսերենի gerondif և գերմաներենի Partizip I-ին օրինակներով վերջնականապես հաստատում է գնդալեն, խաղալեն, երգելեն և նման ձևերի առանձին դերբայ լինելը, որը ցույց է տալիս հիմնական գործողությանը զուգահեռ գործողություն և անկախ

¹ Ի լրացում մենք մատնացույց ենք անում նաև հետևյալ օրինակը, Հրամանք ես, ձմեռը շատ փայլ էսոր մեջ ենք նստելում յա ննջելում (Մուրացան), Լ'նտիր երկեր, հատոր I, 1936, էջ 130):

իր ֆունկցիայից դերքայ է, Հեղինակը իր ուսումնասիրության ընթացքում պարզաբանել է նաև դերքայների այլևայլ խոսքի մասերի փոխանցումների բարդ խնդիրը և ցույց է տվել, որ դերքայի այս կամ այն խոսքի մասի փոխանցումը երբեք չի խանգարում, որ բոլոր դեպքերում այն մեծ որպես բայի յուրահատուկ արտահայտություն։ Այստեղից էլ այն պարզ ու մեկին եզրակացությունը, որ բայի յուրահատուկ այդ արտահայտության ունեությունը միայն նրա ձևաբանական նշանակության հետ չպետք է կապել։

Աշխատության բոլոր առավելությունները ներկայացնել մի ունեցնողիայի սահմաններում անհնար է։ Իր ամբողջությամբ միանգամայն օգտակար այս գրքի մասին ունենք մի քանի դիտողություն։

Ընկեր Արրահամյանը դերքայների և բայի դիմավոր ձևերի տարբերության համար հիմք է ընդունում այն, որ դերքայները չունեն դեմք, դեմքի թիվ, եղանակ, չեն արտահայտում ժամանակային որոշակի հարաբերություններ։ Միայն ունեն բայիմաստ, սեռ, խնդրառություն և մասամբ՝ կերպ։ Շարունակելով իր բնությունը նա գտնում է, որ դերքայներն ունեն նաև դերքայական հատուկ իմաստ, որը դերքայի մեջ դրսևորվող գործողության կամ եղելության վիճակն է (ընդգծումը մերն է — Վ. Ա.), որ որոշ դերքայների մեջ առավել ցայտուն լինելով, մոտենում է ժամանակի կատեգորիային, սակայն չի ստանում այդ կատեգորիայի որոշակիություն (էջ 42)։

Այսպիսի բնորոշումով պարզ չի դառնում, թե վերջիվերջո դերքայի մեջ կա՞ ժամանակային կատեգորիա, թե ոչ։ Իրքի հետագա ուսումնասիրությունը մեզ հասցնում է երկբայություն, որովհետև այն, ինչ որ հեղինակն այստեղ կոչում է ժամանակի անորոշ հարաբերություն, այլ տեղերում կոչվում է վիճակի կատեգորիա, որ հակադրվում է նույնիսկ տարածական հարաբերության։ Ընկ. Արրահամյանը գրում է. «Երբ բայի դերքայական ձևը (տվյալ դեպքում անորոշ դերքայը) դրվում է սեռական հոլովով, այն՝ իրեն պատկանող կամ վերաբերող առարկայի կամ առարկաների նկատմամբ ունենում է ոչ թե գերակշռող տարածական հարաբերություն, տվյալ դեպքում գործողության կամ եղելության կատարելի վիճակի հարաբերություն» (նույն տեղ, էջ 155)։ Մի այլ տեղ նույն հարցի մասին կարդում ենք. «Երբ ժամանակի կատեգորիան հայերենի բոլոր դերքայների դասդասման հիմք ընդունելու տեսակետը և դրա փոխարեն ընդունելով դերքայական հատուկ իմաստը, կարելի է ասել...» (էջ 166)։ Մի այլ տեղ այդ վիճակ համարված կատեգորիան անկատար դերքայի նկատմամբ կոչվում է ընթացք. «Ներգոյական հոլովը ցույց է տալիս առարկայի գոյելը տարածության մեջ, իսկ անկատար դերքայը, լինելով բայական կատեգորիա, ցույց է տալիս կատարվող գործողության կամ եղելության գաղափարը ընթացքի մեջ», էջ 90—91։ Սկզբնապես ընկեր Արրահամյանը դերքայների մեջ մերժում էր ժամանակի կատեգորիան՝ հետևելով պրոֆ. Սևակին, որ իր մի աշխատության մեջ՝ դերքային հատկացնում է երեք հատկանիշ՝ բայիմաստ, սեռ և խնդրառություն, նշելով, որ դերքայները չեն արտահայտում ժամանակ, եղանակ, դեմք, թիվ և կերպ։ Ընկեր Արրահամյանը երբեք կատեգորիային ավելացնում է մասամբ կերպի կատեգորիան և մի կատեգորիա, որ նա կոչում է վիճակի կատեգորիա, բայց, ինչպես երևում է, հեղինակը կասկածում է դրա վրա՝ մեկ անվանելով ժամանակային անորոշ հարաբերություն, մեկ ընթացք, որը դարձյալ հավասարեցվում է ժամանակի (ժամանակը հոսում է և հետևապես ընթացք է, տես՝ 91 էջը)։ Այդ վիճակի կատեգորիա կոչվածը նոր չէ մեր քերականության մեջ։ Պրոֆ. Մ. Արեղյանը, ինչպես նշում է նաև ընկ. Արրահամյանը, կոչում է բայի կերպեր, որոնք անբաժան են ժամանակից և որոնք ցույց են տալիս գործողության հատկությունը որոշ ժամանակակետի նկատմամբ և ըստ այդմ դերքայների հետ կապված երեք կերպ է ընդունվում՝ կատարվող, կատարված, կատարելի։ Ժամանակը, որի նկատմամբ առնվում է գործողությունը, արտահայտվում է օժանդակ բայով. իսկ կերպը, որով առնվում է գործողությունը, արտահայտվում է դերքայներով²։ Այլ խոսքով, այն, ինչ Արեղյանը կերպ է անվանում, այստեղ կոչվում է վիճակ, ընթացք, ժամանակային անորոշություն և այլն։ Մեր կարծիքով, ինչ անում ուզում է տրվի դրան, վերջիվերջո դա դերքայի արտահայտած ժամանակն է. եթե բայը շարժում, գործողություն է արտահայտում. իսկ դերքայը նրա յուրահատուկ արտահայտությունն է, ապա չի կարելի բայի ամենակարևոր հատկանիշը պոկել նրանից և գնել ինչ-որ անորոշ անունների տակ։ Գործողությունը, մատերիայի շարժումը չի կարող ժամանա-

1 Դ. Սեվակ, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, դիրք 1-ին, էջ 175։

2 Մ. Արեղյան, Աշխարհարարի շարահյուսություն, էջ 24։

կից դուրս գտնվել: Մի շարք բերականներ բայի ժամանակը սահմանում են ոչ թե ելնելով օբյեկտիվ իրականությունից, այլ միայն և միայն սուբյեկտիվ հանգամանքներից: Ըստ այդ սուբյեկտիվ ըմբռնման բայը ժամանակ չի արտահայտում, քանի դեռ ես չեմ խոսում, հենց որ սկսում եմ խոսել, ապա տվյալ բայի գործողությունը կամ եղելությունը հարաբերում է իմ խոսելու մի կոնկրետ մոմենտի հետ, որով և ստացվում է ժամանակ, որ մինչև այդ գոյություն չունեի: Ռուս խոշորագույն բերականներից Պեշկովսկին գրում է. «Ժամանակի կատեգորիան նշանակում է գործողության ժամանակի հարաբերությունը խոսքի ժամանակի հետ»: Դուրս է գալիս, որ ժամանակը բայի մեջ օբյեկտիվ կատեգորիա չէ. նա գոյություն ունի այնքանով, որքանով կապվում է խոսողության գիտակցման պրոցեսի հետ, իսկ դերբայը մեր խոսողության մոմենտի հետ հարաբերում է այն ժամանակ, երբ կապվում է որևէ օժանդակ բայի հետ: Հարց է առաջ գալիս. եթե դերբայը ժամանակ չունի, ապա ինչպե՞ս է, որ միևնույն օժանդակ բայի հետ անկատար դերբայը ներկա է կաղմում, իսկ ապառնի դերբայը՝ ապառնի: Եթե դերբայը ժամանակ չարտահայտեր, ապա դրանց առաջացումը լեզվի մեջ անմտություն էր. ըստ ընկեր Աբրահամյանի տեսության հայերենի դերբայները առաջացել են անորոշ դերբայից, իսկ ի՞նչ նպատակ ունեն մի դերբայից ածանցել այդքան դերբայներ, որպեսզի այդ դերբայներն արտահայտեն մինչև այժմ դեռևս չգիտակցված, վիճակի կատեգորիան: Մեր պատասխանը բացասական է. բայի մեջ ոե՛նալը, հասկանալին, անհրաժեշտը ժամանակի կատեգորիան է, դերբայներն էլ լեզվի մեջ գոյացել են ժամանակը արտահայտելու հրամայական պահանջով: Եթե դերբայները ժամանակ չեն արտահայտում, ապա բայի ժամանակը պետք է որոնել օժանդակ բայի մեջ, իսկ օժանդակ բայի միևնույն ձևը մի դեպքում ներկա է (գնում եմ), մի դեպքում ապառնի (գնալու եմ), մի դեպքում վաղակատար (գնացել եմ). հենց այս հակասությունը ցույց է տալիս, որ ժամանակը դերբայի մեջ է արտահայտվում և ոչ օժանդակ բայի մեջ: Իր աշխատության մի այլ տեղում ընկեր Աբրահամյանը ընկել է հակասության մեջ: «Ապառնի դերբայը, — գրում է ընկեր Աբրահամյանը, — արտահայտում է կատարելի, սպասելի գործողություն կամ եղելություն. ապառնի դերբայի դրսևորած այդ յուրահատուկ իմաստը (կատարելի, սպասելի վիճակ), զուգակցելով իմ օժանդակ բայի միջոցով արտահայտվող ժամանակի իմաստի հետ՝ տալիս է գործողության կամ եղելության սպասելի վիճակի հարաբերությունը ներկա և անցյալ ժամանակների հետ: Ուրեմն այս դեպքում ժամանակի կատեգորիան չի ձևավորվում միայն ապառնի դերբայի կամ միայն օժանդակ բայի միջոցով, այլ՝ այդ երկուսի միջոցով, դրանց զուգադրումով» (էջ 321, ընդգծումը մերն է): Ինչպես տեսնում ենք, ժամանակի կատեգորիան ստացվում է բաղադրության միջոցով. իսկ մի այլ դեպքում պարզ չէ, թե ժամանակի ոե՛նալությունը դրանցից որի մեջ է: Վաղակատար — հարակատար ներկա, վաղակատար — հարակատար անցյալ, ստորադասականի բաղադրյալ ապառնի ժամանակների մասին կարդում ենք. «Այս երեք ժամանակների կազմության մեջ եմ օժանդակ բայը արտահայտում է դեմք, դեմքի թիվ և գործողության կամ եղելության հարաբերությունը ժամանակային մոմենտի հետ, իսկ բայական մյուս հատկանիշները դրսևորվում են անցյալ դերբայի միջոցով, դրանց թվում դերբայն արտահայտում է նաև գործողության կամ եղելության վաղակատար — հարակատար վիճակը» (էջ 343):

Ինչպես տեսնում ենք, այստեղ կա միայն ժամանակային մոմենտ, բայց թե որտեղ է այդ մոմենտը, հայտնի չէ, որովհետև դերբայի մեջ այդ մոմենտը կոչված է վիճակ, իսկ օժանդակը միայն հարաբերություն է արտահայտում: Դուրս է գալիս, որ ժամանակ գոյություն չունի:

Այսպիսի հակասական երևույթներ չլին առաջանա, եթե ընկեր Աբրահամյանը դերբայներից չհաներ ժամանակի կատեգորիան: Կարիք կա ասելու, որ առանց օժանդակ բայի էլ ամեն մի հայ մարդու գիտակցության մեջ պարզ է, որ կե՛րած անցյալ ժամանակ է արտահայտում, ուտելու՝ ապառնի, ուտող՝ ներկա և այլն: Այլ բան է, որ այդ ժամանակները խոսելու մոմենտի հետ հարաբերության մեջ չեն գրվում, բայց ոե՛նալ ժամանակը կա, գոյություն ունի նրանց մեջ:

Մեր երկրորդ գիտողությունը վերաբերում է գրաբարի խոնարհմանը Գրաբարի բերականությունների մեջ ա. ե. ու խոնարհումների կազմին ընդունված է նաև ի խոնարհում: Հայագետ Ա. Այտրնյանը հակված է մերժելու վերջին խոնարհման գոյությունը: Մենք կարծում ենք, որ Այտրնյանը հիմք ունի շեղումն ու խոնարհումը Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 5-րդ դարում Խոնարհում անորոշ դերբայ չի եղել. այդ փաստը ապացուցվում է ոչ միայն ոե՛նալ դրություններ, այլև հնչյունաբանական օրենքներով: Եթե հայել, սկսանել, ծնանել (հետագայում ռայիլ, սկսանիլ, ծնանիլ) և այլ բայերի անորոշները ի-ով լինեին, ապա նրանց սիռականը պետք է լինե՛ր ուայլոյ, սկսանլոյ, ծնանլոյ և այլն, բայց այսպիսի ոչ մի վաստ չկա գրաբարում: Շատ տարօրինակ է, որ ուղղականը դատիլ է, իսկ սեռականը՝ դատելոյ: Ընկեր Աբրահ-

համյանը քննվող աշխատության մեջ գրում է. «Պետք է ենթադրել, որ այդ մասնիկը գրաբարում եղել է 5-րդ դարից առաջ, որովհետև գրաբարի շրջանից գալիս են ի խոնարհման բազմաթիվ բայեր և դրանք առանձին խոնարհում են կազմում, ինչպես մյուս խոնարհումների բայերը» (էջ 57)։ Այդ և նախորդ էջերում հեղինակը այն միտքն է արտահայտում, որ եղել է ի խոնարհում, ապա 5-րդ դարից առաջ անցում է տեղի ունեցել ի խոնարհումից և խոնարհման, և սրա համար որպես ապացույց բերում է ի և ե խառն խոնարհման մի շարք բայեր։ Մեր կարծիքով, այս անցումը ոչ թե եղել է 5-րդ դարից առաջ, այլ սրան հակառակ ի խոնարհումը միջին դարերի գրչագրական աղավաղում է։ Այս հաստատելու համար ընկեր Աբրահամյանի խառն համարած բոլոր բայերը (ապրիմ || ապրեմ, քնակիմ || քնակեմ, դադարիմ || դադարեմ, դատիմ || դատեմ, դաւանիմ || դաւանեմ և այլն) ստուգեցինք ամենահին գրչագիր ավետարանի վրա և պարզվեց, որ դադարեմ, պատկանեմ, ապստամբեմ, ծագեմ բայերը բոլորն էլ միայն և միայն ե ունեն, ոչ մի տեղ ի-ով գրություն չկա։ Նույնիսկ ծագեմ բայը «Համաթար-բառում» 68 անգամ գործածված է և ոչ մի անգամ ի-ով չէ։ Խոստովանեմ, հարկեմ ներգործական սեռի բայեր են, որոնց կրավորականը կլինի խոստովանիմ, հարկիմ, ինչպես որ գրեմ — գրիմ։

Դայրագղեմ, պակասեմ, միաբանեմ, հավասարեմ, վաստակեմ, պարագեմ, ծաղկեմ, յօժարեմ, ծառայեմ, հոսեմ, միամտեմ, մեծամտեմ և մյուս բայերը նույնպես և խոնարհման բայեր են։ Սակավ գործածական և ուշ կազմված են ծանրեմ (խկականը՝ ծանրանամ), հետեմ։

Մեր կարծիքով ի խոնարհում գրաբարում չկա. եթե լիներ այդպիսի խոնարհում, նախ անորոշ դերբայ պետք է ունենար, որ չկա, և երկրորդ՝ պետք է ունենար իր ներգործական և կրավորական ձևերը, ինչպես որ ունեն ա, ե, ու խոնարհումները։ Բերված երկվե գրություններից ոչ թե պետք է մեկից մյուսի անցումով բացատրել, այլ ամենից առաջ անորոշի արհեստական փոփոխությամբ, որպեսզի կրավորական սեռ արտահայտի, ինչպես որ գրախոսվող գիրքը ցույց է տալիս այդ երևույթը մյուս դերբայների նկատմամբ։ Այստեղ դեր է խաղացել նաև բայերի տարբեր խոնարհումների շփոթումը։ Օրինակ՝ միամտանամ շեղոք բայը ունի միամտացայ անցյալ կատարյալ ձևը, այդպիսի անցյալ կատարյալ ունեն նաև և խոնարհման կրավորական բայերը, օրինակ՝ գրիմ — գրեցայ. սրա օրինակով միամտացայ անցյալ կատարյալի համար ստեղծում են միամտիմ ներկան, որ գոյություն չունի. այդպես էլ նաև մյուս բայերի նկատմամբ է եղել, որով և ստեղծվել է այդ խառնաշփոթությունը։

Ի-ով խոնարհվող մի քանի ներգործական բայերը պետք է համարել կրավորակերպ ներգործական բայեր. համանման կրավորակերպ բայեր կան շատ կլասիկ լեզուներում. հենց այն հանգամանքը, որ ի-ով խոնարհվող ձևը և խոնարհման կրավորականն է, ժխտում է ի առանձին խոնարհումը։

Հայերենի ապառնի դերբայների մասնիկների ծագումը ընկ. Աբրահամյանը բացատրում է երկու ճանապարհով՝ հոլովման և ածանցման. ըստ այդ բացատրության -ու, -ի, -այ մասնիկները անորոշ դերբայի սեռական հոլովի վերջավորություններն են, որոնք հետագայում կազմել են նաև հայերենի ապառնի դերբայը. որոշ վերապահությամբ նույնը վերաբերում է նաև գրաբարի ապառնի դերբայի -ոց մասնիկին։ Մեր կարծիքով այս թեզի ապացուցման համար հիմքեր քիչ կան։ Հակված ենք կարծելու, որ վերոհիշյալ մասնիկները նույնպես ածանցական մասնիկներն են և ոչ թե հոլովական։ Նախ, բարբախտաբար -ու, -ի, -այ մասնիկները որպես բառակազմական մասնիկներ մեր լեզվում կան և բառակազմական խոշոր դեր են խաղում։ Հիշյալ մասնիկները կցվելով այս կամ այն բառին կամ արմատին վերջից մեծ մասամբ ցույց են տալիս անո՞ղ կամ եղող առարկան, որը բայերի մեջ ավելի պարզորոշ է դրսևորվում։ Օրինակ՝ ամենաթույլը այս կողմից ի մասնիկն է, որ այնուամենայնիվ գտնում ենք մի շարք բառերի մեջ, այսպես՝ կծծանք (ագահություն...) ածանցական բառից ունենք կծծի, որ նշանակում է «ագահ, գծուծ, պիղծ», զործ բառից ունենք զործի, որ նշանակում է «գործող, այսինքն՝ «գործիք»։ Թվենք մի քանիսը՝ երկղիմի, լուճի, երկսայրի, մուլի և այլն։ Անող, հողող առարկայի գաղափարը ավելի ցայտուն են արտահայտում մյուս երկու մասնիկները. օրինակ՝ արյունաբուր, երկրպագու, վերաբկու (համեմատի արկանելի), ծաղրածու, քու (մատնիչ), ծալածոյ, ձուլածոյ, կոփածոյ, կռածոյ, չափածոյ և այլն։ Գրաբարի բերականությունից բաշ հայտնի է, որ -ի վերջավորությամբ ապառնի դերբայը միաժամանակ կատարում է ենթակա-

1 «Գրաբարի -ոց մասնիկով ձևը նույնպես կազմված է անորոշ դերբայից-ոց ածանցիկ կցումով. հնարավոր է, որ այս ածանցն առաջացած լինի հոլովական վերջավորության բարացումով, գրախոսվող աշխատության էջ 153։

յական դերբայի ֆունկցիա և այն էլ ոչ հազվագյուտ գործածությամբ. հայտնի են՝ ածելի, ունելի, բաճալի, սիածաճելի, արկանելի, որոնք իրենց կազմությամբ ոչնչով չեն տարբերվում երկդիմի, բռնի, երկսայրի, մոլի և այլ բառերից, միայն բայի հետ -ի ածանցը որպես գործողի ածանց ավելի ցայտուն է դրսևորվում: Մագումով այդ -ի -երի մեջ ոչ մի տարբերություն չկա: Ընկեր Աբրահամյանի ուսումնասիրությունից պարզվում է, որ ապառնի դերբայի մասնիկներն արտահայտում են գործողի գաղափարը, կամ ինչպես ինքն է ասում, գործողությունը կատարելու համար սահմանված լինելու իմաստը, իսկ մեր վերը բերած մասնիկները հենց այդպիսի իմաստ են արտահայտում, որ հավասարվում են գրաբարի -ոց, Թրիլիսիի բարբառի -ացու, Մեղրու և Հավարիկի բարբառների -ացուկ և այլ բարբառների -ական, -ան մասնիկներին: Սրան ավելացրած նաև այն մի բանի օրինակները, որոնք բերված են Արարատյան բարբառի խոռու խոսվածքներից և Համշենի բարբառը, որտեղ ենթակայական դերբայով (-ոդ մասնիկով) կազմվում է ապառնի ժամանակը, կարելի է եզրակացնել, որ ապառնի դերբայը առաջացել է գործողի գաղափարը արտահայտող ածանցներով և ոչ սեռական հոլովի վերջավորությամբ:

Ոչ մի դեպքում գրաբարի անորոշ դերբայը չի կարող սեռականում -ի ընդունելու: Ընկեր Աբրահամյանի՝ Առձեռն բառարանից բերած օրինակները՝ առանց բուծելի, առանց ըմբոնելի ոչ թե բուծել, ըմբոնել բայերի սեռականներն են, այլ բուծելի և ըմբոնելի ապառնի դերբայների ուղիղ հոլովներն են, որովհետև հենց դրանց միջև գտնում ենք առանց ղուգական¹, որ ինչպես երևում է, սեռական չէ: Առանց բառը այդտեղ համազոր է ան ժխտական նախածանցին և ունի բառակազմական արժեք, ինչպես նշում է նաև հիշյալ բառարանը:

Իր գրքի հաջորդ էջում ընկեր Աբրահամյանը գրաբարի անորոշ դերբայի -ի-ում հոլովվելու երևույթը փաստարկում է Կեսարիայի բարբառի անորոշ դերբայի կրկնակի հոլովման փաստով, իսկ վերջին փաստը հաստատելու համար հիշատակում է, որ գրաբարում էլ կան հոլովական բարացած ձևեր, որոնք ենթարկվում են կրկին հոլովման, և սրա համար բերում է միջոց բառը, որը որպես թի հոգնակի սեռական է, բայց և գրաբարում կրկին հոլովվում է. օրինակ՝ միջոց — միջոցի, միջոցաց (օրինակը մերն է): Նախ՝ Կեսարիայի բարբառի անորոշ դերբայը այդպես հոլովվելը ապացույց չէ գրաբարի համար, և երկրորդ՝ մեր կարծիքով միջոց բառը ոչ թե մեջ բառի սեռականն է, այլ ածանցված բառ է՝ խաբտոց, մատնոց, սղոց, խայթոց, ֆշոց, հոռոց, վարոց, ֆերոց և այլ բառերի օրինակով: Նշենք ևս մի այդպիսի օրինակի տեղին չլինելու մասին. 82 էջում բերված է Սեբեոսից ի տեսանելումն ձեր, որ տեսանելի (տվյալ դեպքում գոյական) բառի ներգոյական հոլովն է. սա ոչ մի կապ չունի անորոշ դերբայի հետ և ոչ մի դեպքում ներգոյականի կազմության համար ապացույց չի կարող ծառայել. դա գրողի մեղքում անորոշ դերբայի արժեք չի ունեցել, այլ եղել է -ի-ով վերջավորվող մի գոյական, որի ներգոյականը կարող է—ուս—ով լինել. համեմատիր՝ այսպիսի — այսպիսում²:

Մեր կարծիքով բունագրոսիկ բացատրությունն է Ագուլիսի և Զուղայի բարբառների -աց և -էց դերբայական մասնիկները հանել -ի մասնիկով ապառնի դերբայի հոգնակի սեռականից, որպես թե մնալի, հոգնակի ուղղականը՝ մնալիք, սեռականը՝ մնալեաց, ապա՝ մնալէց, մնալաց: Սրանք, ինչպես ճիշտ նշում են Աճառյանը և Սարգսյանը, գրաբարի-ոց մասնիկի հնչյունափոխված ձևերն են. այս բացատրությունը կասկածի տակ առնելն ավելորդ է, մանավանդ, որ դոլություն ունեն նաև հնչյունափոխական տվյալներ:

Մեր կարծիքով ընթացակցական դերբայի-են (-էն) մասնիկը ճիշտ կլինի առաջացած համարել -եայն ածանցից, քան բացառական հոլովից, մանավանդ հայտնի է, որ դեռ գրաբարում -եայ ձևը սպոնտան կերպով բառավերջում դարձել է -է. օրինակ՝ Աշտեայ — աշտէ, բագեայ — բագէ, կաթողիկեայ — կաթողիկէ, ափսեայ — ափսէ և այլն. իսկ ինչ վերաբերում է -եայն ածանցին, որ մնացել է միայն լուել անորոշի վերջում, ապա դա բառավերջում դժվար հնչելի է, ուստի գրաբարից համարյա վերացել է, իսկ հայերենի մյուս հատվածներում ձևափոխված պահվել է -լն ձևով, զնգալէն, վագելէն և այլն: Կասկածելի է թվում նաև միջին հայերենի ու Թրիլիսիի բարբառի ճոճկտալի, փրփրալի, խըլալտալի ձևերը ապառնի դերբայ համարելը (տես էջ 317): Հավանական է, որ այդտեղ դեր է խաղում կիսովի, փաղափաղի, ընկերովի և նման բառերի -ի ածանցը, որն անորոշ դերբայների մոտ հետադայում նույնացել է ապառնի դերբային:

Այս դիտողությունները վերաբերում են մասնակի հարցերի: Գիրքն իր ամբողջությամբ օգտակար ներդրում է հայագիտության մեջ:

¹ Տես «Առձեռն բառարան», էջ 109, գրախոսվող աշխատության էջ 127:

² Նվյ պարապլեալքն այսպիսում ճգնութեան... Խորենացի, 1-ին, գլ. 9.